

« Դեռ կայ :

— Ո՛հ, հայր իմ, ներէ, թողութիւն սուր ինծի. մէյմ՝ ալ չեմ ըներ. այն չափ կ'աղաչեմ տառնապետ եղբորորդիս որ ձիանէդդոն չեն մեռցներ : »

Խօսքը բերանն էր դեռ երբոր Մադէոյ հրացանը լեցուցած նշան կ'առնէր զուրցելով. « Աստուած թողութիւն տայ քեզի » : Տղան յուսահատ շարժում մ'ըրաւ ոտք ելլալու և հօրը ծընկուրներուն պլլուելու համար, բայց չհասաւ. Մադէոյ հարուածը խրկեց և աչք բանալ գոցելու միջոց ֆորդունադոյ ինկաւ աննշացեալ :

Մադէոյ առանց աչք մը տալու դիակին՝ սկսաւ տունը դառնալ բահ մ'առնելու համար որպէս զի զաւակը թաղէ. քանի մը քայլ հազիւ ըրեր էր ու ահա Յովսէփինէ հրացանի հարուածէն սարսափած դէպ 'ի իրեն կը վազէր :

« Ի՛նչ ըրիր, աղաղակեց :

— Արդարութիւն :

— Ո՛ւր է տղան :

— Չորին մէջ. թաղելու կ'երթամ. քրիստոնէի պէս մեռաւ և հոգւոյն համար պատարագ մը զուրցել պիտի տամ : Իմաց տուր Դիոտորոյ Պիանքի փեսայիս որ գայ հետերնիս բնակի » :

ԲՐՈՍԷՐ ՄԵՐԻՄԷ

### ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

(Տես էջ 289 :)

Բուսէն . ինչպիսի անուն բերնէս կը հանեմ : Եթէ Լըսիւէօս զգացման նկարիչն է, Բուսէն մտացն է. կարծես թէ նկարչութեան փիլիսոփայն է. իր պատկերները կրօնական կամ բարոյական դասեր են որ կը յայտնեն մեծ միտք մը և մեծ սիրտ մը : Հերիք է անուանելն Եօթն խորհուրդները, Ջրհեղեղը, Արկադիան, Ճշմարտութիւնը զոր ժամանակը կ'ազատէ Նախանձուն հարուածներէն, Եւդամիդասի կտակը,

Մարդկային կենաց կաքաւը : Բուսէնի ոճը մտածութեանը չափ բարձր է. կ'ուրուագրէ փլորենտացւոյ մը պէս, Գաղղիացիի պէս կը բաղադրէ, և շատ անգամ կը հաւասարի Լըսիւէօսի բացատրութեանը մէջ. միայն գոյներուն խառնուածը թերի է : Նման Ռասինեայ ինքն ալ կը սիրէ հին գեղեցկութիւնը և անոր կը նմանցնէ. բայց Ռասինի պէս ինքն ալ միշտ նախատիպ է : Լըսիւէօսի անզուգական պարզութեանը և շնորհքին տեղ ինքն ալ ունի սաստիկ պարզութիւն մը հանդերձ այնպիսի ուղղութեամբ զոր ոչ երբէք կը թողու : Պէտք չէ նաև մոռնալ որ ամէն տեսակներն ալ փորձած է. մեծ նկարիչ է թէ պատմութեան և թէ դաշտորայից . այնպէս աղէկ կը յաջողցնէ կրօնից նիւթերն ինչպէս հեթանոսականքը, և հետզհետէ կ'ընդունի իրեն ներշնչմունքն հնութենէն և Աստուածաշնչէն : Իրաւ է որ շատ կեցած է Հռոմ և հոն ալ մեռած է. բայց Գաղղիա ալ աշխատած է, և գրեթէ միշտ Գաղղիոյ համար. հազիւ թէ իրեն ով ըլլալը ճանչցուեցաւ, Ռիչլիէօ կանչեց զինքը Բարիզ և հոն պահեց՝ առատ պատիւներ տալով իրեն և անուանելով առաջին նկարիչ թագաւորին և վերակացու արքունի ապարանից ամէն պատկերներուն և զարդերուն : Բարիզ երկամեայ բնակութեանը միջոց նկարեց վերջին ընթրիքը, Ս. Փրանկիսկոս ֆսաւերեանը, ճշմարտութիւնը զոր ժամանակը կ'ազատէ Նախանձու ձեռքէն : Դարձեալ Գաղղիոյ համար, իրեն Շանդու բարեկամին համար խաւրեց Հռոմէն Պօղոս Առաքելոյն յափըշտակութիւնը, ինչպէս նաև Եօթն սուրբ խորհրդոց երկրորդ շարայարութիւնը, որ մեծ աշխատութիւն մ'է և մտածութեանց բարձրութեամբը կրնայ մրցիլ Ռափայելի Սղանցէներուն հետ : Այս խօսքերս փորագրութենէն դատելով կ'ըսեմ, վասն զի Եօթն խորհուրդները Գաղղիա չեն : Յաւիտենական ամօթ ժը դարուն. զոնէ Պարթենոնի ճակատները Յունացմէ յափշտակուած են :

խակ մենք ծախեցինք օտարազգեաց  
զազղիական հանճարոյն բոլոր այս յի-  
շտատակարանները, գորոնք մեծաւ իւր-  
նամով հաւաքեր էին Ռիչլիէօ և Մա-  
ղարէն . և հասարակաց զայրոյթը չպա-  
խարակեց այս գործքս, և յետոյ Գաղ-  
ղիոյ մէջ չգտնուեցաւ թագաւոր մը,  
պաշտօնեայ մը որ արգելու առանց  
հրամանի ազգային երկրէն դուրս հա-  
նելը այն արուեստին հրաշակերտքը որ  
ազգին պատիւ են. չգտնուեցաւ կա-  
ռավարութիւն մը որ գոնէ ջանար նո-  
րէն գնելու մեր կորուսածները և ստա-  
նար զարձեալ Բուսէնի, Լըսիւէօուի և  
զեռ ուրիշ այնչափներու մեծամեծ  
գործքերը որ դան և ցիր սփռուած են  
Էւրոպա, փոխանակ միլիոններ փճացը-  
նելու Հոլանտայի այլանդակ պատկեր-  
ներ գնելու համար, (des magots de  
Hollande) ինչպէս կ'ըսէր Լուգովիկոս  
ժԻ, կամ սպանիական նկարներ՝ որ  
ստուգիւ հրաշալի գոյներ ունին բայց  
առանց ազնուութեան և բարոյական  
բացատրութեան: Ես ալ կը ճանչնամ  
և կը սիրեմ Բողդէրի հոլանտական ա-  
րտաները և կովերը. անզգայ չեմ Յիւր-  
պարանի միջին և փայլունակ գոյնե-  
րուն, և Մուրիլեոյի ու Վէլապէզի ի-  
տալական ճարտար նմանութեանց .  
բայց ինչ պիտի ըլլան այս ամէն բանս  
Եօթն սուրբ Խորհրդոց պէս ծանր և կո-  
րովի բաղադրութեանց առջև, այն  
քրիստոնէական ծիսից խորագրոյ՞մ  
պատկերին քովը՝ որ մտաց և հոգւոյ  
բարձրագոյն կարողութեց գործն է, և  
յորում մարդուս միտքը և հոգին պիտի  
գտնեն յաւիտեանս ուսանելու և խոր-  
հրդածելու անհատնում ճարակ մը:  
Գոհութիւն Աստուծոյ որ Բէնի գրիչը  
ազատած է զանոնք մեր ապերախտու-  
թենէն և բարբարոսութենէն, մինչգեռ  
սկզբնանկարքը կը զարգարեն անգ-  
լիացի մեծ պարոնի մը թանգարանը,  
Բէնի (Pesne) մը, Սդէլլայի մը բարե-  
կամութիւնը և հանճարը պահեցին մե-  
զի հաւատարիմ օրինակներ այն կեն-  
դանի փորագրութեանց մէջ որոնց նա-  
յիլէն մարդս չկշտանար և ամէն ան-

գամ որ կը նայի կը յայտնեն մեր հո-  
յակապ հայրենակցին հանճարոյն մէկ  
նոր կողմը: Դիտէ մանաւանդ Վերջին  
Օծումը. ինչ վսեմ և միանգամայն ինչ  
չնորհալի տեսարան. կարծես թէ հին  
խորաքանդակ մ'է, այնպէս աղէկ բաժ-  
նուած են խումբերը բնական և պէս-  
պէս դիրքերով. սքանչելի են նաև ըզ-  
գեստները՝ Լուվուր պահուած Համա-  
թենականաց կտորին պէս. ամէն դէմ-  
քերն ալ զեղեցիկ են: Ասիկայ փորա-  
գրութիւն է, կրնայ ըսել մէկը. այո,  
բայց նաև նկարչութիւն ալ է, բաւա-  
կան է որ նկարչի աչք ունենաս, և եթէ  
կրնան զքեզ զարմացնել այս կեցուած-  
քներուն, այս գլխոց, այս շարժուածոց  
և գրեթէ այս նայուածքներուն բացա-  
տրութիւնը. որովհետև ամենայն ինչ  
կենդանի է, ամենայն ինչ կը շնչէ,  
նաև այս փորագրութեանց մէջ. և թէ  
որ հոս տեղն ըլլար կը ջանայինք հա-  
ղորդել ընթերցողին այն քրիստոնէա-  
կան զգացման գաղտնիքը որ նաև ա-  
րուեստին գաղտնիքն ալ են:

Ջանանք մխիթարուիլ Եօթն խոր-  
հուրդներուն կորստեանը և Անգլիայէն  
ու Գերմանիայէն Բուսէնի զեռ ուրիշ  
այնչափ նկարները յափշտակել չկըր-  
նալնուս վրայ, որ այսօրուան օրս օ-  
տարներու հաւաքածոյից մէջ ընկղմած  
են, և երթանք տեսնենք ՚ի Լուվու ինչ  
որ մնացած է ձեռուրնիս գազղիացի  
անուանի արուեստագետէն, երեսունի  
մը չափ պատկերներ զորոնք շինած է  
այլ և այլ ժամանակ և որոնց մեծ մասն  
արժանի են իրեն համբաւոյն. Բուսէ-  
նի դէմքը, Ռիչլիէօյի համար շինուած  
Սպանդարամետական տօներէն մէկը,  
Արէս և Աստղիկ, Ագոնիսի Մահը, Սա-  
բինուհեաց Առևանգութիւնը, Եղիա-  
զար և Ռեբեկա, Մովսէս ազատեալ ՚ի  
ջուրց, Յիսուս Մանուկ Աստուածա-  
ծնայ ծնկուրներուն վրայ և Ս. Յովսէփ  
որ սուրբի վրայ կեցած է, մանաւանդ  
անապատի Մանանան, Սողոմոնի Գա-  
տաստանը, Երիքովի կոյրերը, Շնա-  
ցեալ կինը, Ս. Պօղոսի Յափշտակու-  
թիւնը, Զրհեղեղը, Արկաղիան: Ժա-

մանակը թխացուցած է իրենց գոյնը որ ոչ երբէք պայծառ եղած են, բայց փոքրիկ վնաս մ'ալ չէ կրցած ընել այն բանին որով յաւիտեանս անմահ պիտի մնան, այսինքն քաշուածքին, բաղադրութեանը և բացատրութեանը: Ջրհեղեղը միշտ ահաւոր տպաւորութիւն մ'ըրած է և պիտի ընէ. յետ այնչափ նկարիչներու որ նոյն նիւթն ընտրած են, Բուսէն գտած է նախատիպ ըլլալու գաղտնիքը և իր ամէն նախորդներէն աւելի սրտաշարժ է՝ այն մեծ վայրկեանը ներկայացնելով յորում մարդկային ազգը բնաջինջ պիտի ըլլայ. մանրամասունքը քիչ են. քանի մը դիակներ կը ծփան անդունդին վրայ. հազիւ կ'երևայ տխրերանգ լուսին մը. քանի մը վայրկենէն հետակորոյս պիտի ջնջուի մարդկային ազգը. 'ի զուր վերջին մայրը կ'երկնցընէ իր վերջին զաւակը վերջին հօրը որ չկրնար ազատել զանիկայ և զմարդ խարդաւանող օձը կը սնկուի յաղթական: Պարապ տեղը Ջրհեղեղին մէջ դողդոջոտ ձեռքի մը մէկ քանի նշանները գտած են ոմանք. այս ձեռքս պինդ բռնող և առաջնորդող հոգին կը հաղորդուի մեր հոգւոյն որ կը խանդաղատի մինչև 'ի խորս աղետաց: Թող այդ սգոյ տեսարանը և գրեթէ անոր քով դարձուր աչուրներդ այն հովասուն դաշտանկարին և այն անդէորդաց վրայ որ գերեզմանի մը քով ժողվուած են: Ամենէն տարեցը՝ մէկ ծունկը գետին՝ կը կարգայ քարի մը վրայ փորուած այս խօսքերս. Et in Arcadia ego. ես ալ Արկադիա ապրած եմ. ձախ գին ուրիշ հովիւ մը մտիկ կ'ընէ լուրջ ուշադրութեամբ մը. աջակողմը սիրուն զոյգ մը կայ ծաղկահասակ հովուի և հրաշագեղ օրիորդի մը. աղուական զարմանք մը նկարուած է պատանի խաչնարածին վրայ, որ կը նայի գոհութեամբ իր գեղեցիկ ընկերոջը վրայ. իսկ աղջկան քաղցրիկ երեսը և ոչ թեթև ստուեր մը կը քօղարկէ. կը ժպտի և ձեռքը թուլակի կռթնցուցած երիտասարդին ուսոց վրայ կարծես թէ չիմանար այն

գեղեցկութեան, երիտասարդութեան և սիրոյ տրուած դասը: Կը խոստովանիմ որ միայն այս պատկերիս գողտրիկ փիլիսոփայութեանը համար կու տամ յօժարութեամբ շատ մը գեղեցիկ գոյն ունեցող նկարներ, բոլոր Բողոքէրի արօսները, բոլոր Օսդատի ծաղրածութիւնքը և Դէնիէի միմոսական պատկերները:

Լըսիւէօու և Բուսէն այլ և այլ կատարելութեամբք բայց գրեթէ մէկմէկու հաւասար, պարագլուխք են մեր ժէ դարուն համբաւաւոր նկարչութեանը: Իրենցմէ ետքը ինչպիսի պատկերահաններ են նաև Գլօտ Լորենացի և Փիլիպպոս Շամբանեացի:

Գլօտէն աւելի մեծ իտալացի կամ հոլանտացի դաշտանկարիչ մը կը ճանչնան: Նայէ սա ծաւալ ծաւալ և գեղեցիկ միայնութեանց՝ զորոնք կը լուսաւորեն արևուն առաջին կամ վերջին ճառագայթները, և ըսէ ինծի թէ արդեօք այս միայնութիւնքը, այս ծառերը, այս ջրերը, այս լեռները, այս լոյսը, այս լուսթիւնը, այս բովանդակ բնութիւնը հոգի չունին, և այս նշուլապարդ և վճիտ հորիզոններէն անդին չես վերանար ակամայ անպատմելի ցնորից մէջ, գեղեցկութեան և շնորհաց անտեսական աղբիւրը: Լոռենացին ամէն բանէ աւելի լուսոյ պատկերահանն է, և իրեն նկարները կրնայինք լուսոյն և իր ամէն մեծ ու պրզտիկ բաղադրութեանցը պատմութիւնն համարիլ, երբոր կը տարածուի ընդարձակ դաշտերու վրայ կամ զանազան կերպերով կը բեկբեկի երկրիս վրայ, ջրերուն մէջ, յերկինս, իր յաւիտենական վառարանը: Մարդկային տեսարաններն որ պատկերին մէկ կողմը գրուած են, դուրս կը ցաթքեցնեն և աւելի փայլ մը կու տան բնութեան տեսարաններուն ներդաշնակութեամբ կամ ներհակութեամբ: Գիւղական Հանդիսին մէջ կ'երևայ կեանքը, աղաղակը և շարժումը, նկարին խորը կը տիրէ խաղաղութիւն և մեծութիւն, և իրաւցնէ պատկերն ալ ասոնց վրայ

կայացած է. նոյն բանն ըսելու է նաև կովերուն ու Եզներուն համար որ գե- տէ մը կ'անցնին. աչուրներուդ տակ եղած դաշտանկարը շատ զարմանալի բան մը ներկայացներ, այլ ամէն տեղ կրնաս տեսնալ անոր նմանները. բայց հեռանկարին մէջ խոթուէ ու կը տես նաև որ կը տանի զքեզ արգաւանդ դաշտորաններէ, գեղեցիկ գետէ մը, ա-ւերակներէ և անոնց վրայ նայող լեռ-ներէ և կը կորսուիս անծայր անոլորտ հեռաւորութեանց մէջ: Այս դաշտա- նկարս որուն մէջ գետ մը կը տեսնուի և տուարած մը կը խմցնէ իր ոչխար-ները, առջի բերան շատ բան մը չզուր-ցեր. բայց դիտէ զայն բաւական ա-տեն, և խաղաղութիւնը կամ բնու-թեան մէջ եղած տեսակ մը ամիոփու-թիւնը և ճարտար կերպով ձևացու-ցած հեռանկարը, կամաց կամաց կը գրաւեն սիրտդ և այս պղտիկ պատ-կերս կը զմայլեցնէ զքեզ: Դաշտանկար մը ըսուած պատկերը կը ներկայացնէ լայնածաւալ ծառախիտ դաշտ մը զոր կը լուսաւորէ այգածին արևն. ասոր մէջ կայ զովութիւն և գրեթէ տաքու-թիւն ալ, խորհրդականութիւն և պայ-ծառութիւն և քաղցր ներդաշնակու-թեամբ լի հորիզոններ: Արևու մտնա-լուն դէմ Պար մը կը նշանակէ գեղա-զուարճ օրուան մը լմնալը. մարդ կը տեսնայ կը զգայ հոնտեղ օրուան ջեր-մութեան մեղմանալը. նկարին առ-ջևովը քանի մը հովիւք և հովուուհիք պար կը բռնեն իրենց ոչխարներուն մօտ:

Կը զարմանամ որ ոմանք զՇամբա- նեացին ֆլաման դպրոցէն կը սեպեն. իրաւ է որ Պրիւսէլ ծնած է, բայց շատ կանուխ եկած է Բարիզ և իր բուն վարժապետը և խրատտուն Բուսէն ե-ղած է: Գաղղիոյ նուիրած է իրեն հան-ճարը, հոն ապրած, հոն մեռած է, և ամենէն աւելի՝ ոճը բոլորովին գաղ-ղիական է: Կրնայ ըսուիլ որ իր գոյնե-րը Ֆիանտրայէն առած ըլլայ. պատաս-խան կու տանք որ այս յատկութենէս զատ մեծ պակասութիւն մ'ալ առած

է Ֆիանտրայէն, այսինքն դէմքերուն մէջ գաղափարականութիւն (idéauté) չունենալը, և Գաղղիայէն ստրված է այս պակասութիւնս լեցնել բարոյա-կան բացատրութեան գեղեցկութեամբ բը: Շամբանեացին ստորին է քան զԼը-սիւէօն և զԲուսէն, բայց իրենց ընտա-նիքէն է. ինքն ալ այն Գոռնէյի ժա-ժամանակակից արուեստագէտներուն պէս էր, անպաճոյճ, աղքատիկ, առա-քինի և քրիստոնեայ. Շամբանեացին աշխատած է թէ Ս. Յակոբ փողոցին կարմելականաց վանքին համար (որ ջեր-մեռտնդն և վսեմ բարեպաշտութեան մը պատուական օթևանն եղած է), և թէ Բոր-Ռուայալի համար, որ թերևս աշխարհքիս վրայ մէկհատիկ տեղն է ուր ամենէն աւելի անձուկ միջոցին մէջ ամենէն առաքինի և հանճարեղ անձինք բնակած ըլլան, այնչափ սքան-չելի մարդիկ և իրենց ոչ ինչ անար-ժան կանայք: Ի՞նչ եղած է այն ա-նուանի խաչելութիւնը՝ զոր նկարած էր կարմելականաց եկեղեցւոյն գմբէ-թը, այն հրաշալի հեռանկարն որ հորի-զոնական մակերևութի մը վրայ ուղ-ղահայեաց կ'երևար. — կորսուեցաւ սուրբ տանն հետ: Վերջին ընթրիքը կենդանի է դէմքերուն, շարժմանց և գրից ճշմարտութեամբը. բայց այս պատկերիս չեմ հաւնիր, ինչու որ ե-րևակայութիւն չունի. նոյն բանն ըսե-լու հարկադրուած եմ նաև Սիմոնի Փարիսեցւոյ տունը հացկերոյթին հա-մար: Շամբանեացւոյն գլուխ գործոցն է Գերուաս և Պրոտաս սուրբերուն մե-ծին Ամբրոսիոսի երևնալը Միլանու կա-թուղիկէի մը մէջ, յորում կը տես-նուին գաղղիական արուեստին բոլոր ձիւրքերը, պարզութիւն և մեծութիւն բաղադրութեանը մէջ և խորին բացա-տրութիւն մը: Այս ընդարձակ կտա-ւոյս վրայ միայն չորս անձինք կան, այս-ինքն երկու մարտիրոսները և Պօզոս Առաքեալ որ կը ներկայացնէ զանոնք սուրբ Ամբրոսիոսի. այս չորս կերպա-րանքները կը լեցնեն ընդարձակ կա-թուղիկէն որ լուսաւորուած է զիշե-

րուան մութին մէջ պայծառ երևամբ  
բը . երկու մարտիրոսները լի են վեհու-  
թեամբ . սուրբ Ամբրոսիոս ծնրադիր և  
աղօթաւոր՝ կարծես թէ սարսափով  
պաշարուած է :

Կը հրաշանամ ստուգիւ Շամբանեա-  
ցւոյն վրայ իբրև նկարիչ պատմութեան  
ու նաև իբրև նկարիչ դաշտորայից .  
բայց թերևս աւելի մեծ է իբրև դիմա-  
գծող պատկերահան . հոս ճշմարտու-  
թիւնը և բնականութիւնը մասնաւորա-  
պէս իրենց տեղն են՝ գեղեցիկ գոյնե-  
րով և ինչպէս որ պէտք է աղէկ բա-  
ցատրուած : Շամբանեացւոյն նկարած  
դէմքերը մէյմէկ յիշատակարաններ են  
որոնց մէջ յաւիտեանս պիտի ապրին  
իր ամենէն երևելի ժամանակակիցքը .  
ամէնն ալ զարմանալի են իրենց բնա-  
կանութեամբը, ծանրութեամբը, խրա-  
տութեամբը և մեղմ անուշութեամբ  
մը : Թէ որ Բոր-Ռուայալի գրուածքը  
կորսուելու ըլլան, բովանդակ Բոր-  
Ռուայալ կրնայ գտնուիլ Շամբանեա-  
ցւոյն մէջ : Ահաւասիկնա ինքն անհրա-  
պոյրն Սէն-Սիրան, ինչպէս նաև իր հա-  
լածիչը, սէզն Ռիչլիէօ . ահաւասիկ գի-  
տունն և ձեռներէց Անտոն Առնոյ, ո-  
րուն՝ Գոռնէյի և Պոսիւէի ժամանակա-  
կիցքը Մեծ անունը տուին . ահաւա-  
սիկ տիկինն Անժէլիք Առնոյ իր պար-  
զուկ և կորովի կերպարանքովն . ահա-  
ւասիկ մայրպետն Ագնէս և նոյն իսկ  
Շամբանեացւոյն ցածուն աղջիկն, հա-  
ւատուհին սուրբ Շուշան . հրաշքով ա-  
զատած է հիւանդութենէ մը և իր ծիւ-  
րեալ ծնգեալ մարմինը դեռ ևս կը կրէ  
նշխարեալ ցաւոց գրոշմը . իրեն դիմաց  
մայրպետն Ագնէս ծնկան վրայ եկած  
երախտազէտ ուրախութեամբ մ'իրեն  
կը նայի . տեսարանին տեղը խեղճ խցիկ  
մըն է, որուն բոլոր զարդն են պատէն  
կախուած փայտէ խաչ մը և քանի մը  
յարդէ աթոռներ : Պատկերին վրայ կը  
կարդացուի այս խօսքս . Christo uni  
medico animarum et corporum, և  
այլն . Քրիստոսի միայնոյ թժշկի հո-  
գոց և մարմնոց . այս պատկառելի  
ծանրութեանս մէջ կը նշմարուի Բոր-

Ռուայալի քրիստոնէական ստոյիկեա-  
նութիւնը : . . . .

Բարիգոշ այս տարուան աշխարհուս  
դէսն : — Զմիշտնացի Յ. Օ. Տէ-  
տէւանց սուսցաճ պատիշն :

Արդի ժամանակիս երթեւեկի դիւ-  
րութիւններէ գրգռեալ կարող եղող  
ազգայիններէ քիչ անձինք գտնուե-  
ցան, որ այս տարի Բարիգոշ աշխար-  
հանդիսին պատճառաւ Եւրոպա ոտք  
չկոխեն, ուր զարմանալի միութիւն մը  
կը տեսնուէր յարեւելից և յարեմտից  
եկած համօրէն ազգաց, որոց իւրաքան-  
չիւրն գովելի և խաղաղասէր մրցանօք  
կը ջանային իրենց մտաւոր և արուես-  
տական յառաջադիմութիւնն պարզելու  
հետաքնին աչաց . առանց չափազան-  
ցութեան կրնանք ըսել, որ Բարիգոշ  
Արիսեան դաշտն, ուր Աշխարհանդէսն  
եղաւ, մինչև այն ատեն որ պատերազ-  
մական զինուց շառաչմանց արձագան-  
գը միայն կու տար, բոլոր տարուանս  
ընթացքին մէջ, փոքր աշխարհ մը դար-  
ձեր էր, ամիսփելով 'ի միասին քանի  
մը հարիւրդարեան պատմական յի-  
շատակաց մնացորդներէն մինչև արդի  
ժամանակիս յառաջադիմութեան նշա-  
նակներն : Ոչ միայն ներկայացրնելով  
իւրաքանչիւր ժամանակի արուեստա-  
կան նիւթերն, այլ և բնիկ շէնքերն,  
հոյակապ փարաւոնեան պալատներէն  
և Սպանիոյ Ալհամրական դահլիճնե-  
րէն, մինչև արդի ասիական ազգաց տը-  
ներն, բաղնիքներն, աղօթանոցներն, և  
այլն : Հանդիսատեսն համեմատաբար  
փոքր ընդարձակութեան մէջ՝ դարա-  
կան և գնտիս վրայ բոլորական ճամ-  
բորդութիւն մը ըրած կրնար սեպել,  
երբ իրապէս փարաւոնի մը պալատան  
մէջ շինողին ժամանակակից արձան-  
ներն, մուսեաններն տեսներ, և ինքզին-  
քը մէյմը Եւրոպայի հիւսիսային ազգաց  
լարոնական խրճիթներուն մէջ, մէյմ՝ ալ